Կ-556[1]-07.04.2023-ՏՏԳՇ-011

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի.

1. առաջին պարբերության «(բացառությամբ հողերի)» բառերը հանել.
2. երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-556[1]-07.04.2023-ՏՏԳՇ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.- «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի.

~~1.~~ առաջին պարբերության ~~«~~«(բացառությամբ հողերի~~» բառը փոխարինել «այդ թվում՝ հողերի» բառերով.~~)» բառերը հանել.

~~2.~~ երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

Հոդված 2.- Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-556-07.04.2023-ՏՏԳՇ-011/1) օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին					
1.	**Ազգային ժողովի պատգամավոր Վ. Ղալումյան**	**1-ին (խմբագրված 2-րդ) հոդվածի 1-ին մաս**	**1-ին (խմբագրված 2-րդ)** հոդվածի **1-ին մասից հանել՝ «այդ թվում՝ հողերի» բառերը, քանի որ ըստ քաղաքացիական օրենսգրքի, անշարժ գույք եզրույթը արդեն իսկ իր մեջ ներառում է հողամասերը և՛ անշարժ գույքի կազմում մատնանշել այդ հողերը ավելորդ է:** **1-ին մասում՝** **«1. առաջին պարբերությունում «բացառությամբ հողերի» բառերը փոխարինել «այդ թվում՝**	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

			հողերի» բառերով.» բառերի փոխարեն 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «1.առաջին պարբերության «(բացառությամբ հողերի)» բառերը հանել.»:		
«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»					
1.	**Ազգային ժողովի պատգամավոր Վ. Ղալումյան**	1-ին հոդվածի 1-ին մաս	1-ին հոդվածի 1-ին մասից **հանել՝ «այդ թվում՝ հողերի» բառերը, քանի որ ըստ քաղաքացիական օրենսգրքի, անշարժ գույք եզրույթը արդեն իսկ իր մեջ ներառում է հողամասերը և՛ անշարժ գույքի կազմում մատնանշել այդ հողերը ավելորդ է:** **1-ին մասում՝ «1. առաջին պարբերության «բացառությամբ հողերի» բառը փոխարինել «այդ թվում՝ հողերի» բառերով» բառերի փոխարեն 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝** **«1. առաջին պարբերության «(բացառությամբ հողերի)» բառերը հանել.»**	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»					
1.	**Ազգային ժողովի պատգամավոր Վ. Ղալումյան**	**1-ին հոդվածի 1-ին մաս**	1-ին հոդվածի 1-ին մասից հանել «այդ թվում հողերի» բառերը. **քանի որ ըստ քաղաքացիական օրենսգրքի, անշարժ գույք եզրույթը արդեն իսկ իր մեջ ներառում է հողամասերը և՛ անշարժ գույքի կազմում մատնանշել այդ հողերը ավելորդ է:** 1-ին մասում՝ «1. «բացառությամբ» բառը փոխարինել «այդ թվում» բառերով.» բառերի փոխարեն շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «1. «(բացառությամբ հողերի)» բառերը հանել.»	Ընդունվել է	Ընդունվել է
«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին					
1.	**Կառավարություն**	**1-ին հոդված**	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված է, որ պետական	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

			սեփականություն համարվող՝ հող չհանդիսացող անշարժ գույքի մասնավորեցումից ստացվող միջոցները պետական բյուջե են ուղղվում 70 տոկոսի չափով: Այդ դրույթն անփոփոխ թողնելու պարագայում հակասություն կառաջանա նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող կարգավորման հետ: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք վերոնշյալ մասից՝ «՝ հող չհանդիսացող» բառերը հանել՝ **Առաջարկում ենք լրացնել նոր 1-ին հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.** **«Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997**		

			թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «՝ հող չհանդիսացող» բառերը հանել:»: **Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է:**		
2.	**Կառավարություն**	**1-ին (խմբագրված 2-րդ) հոդված**	«28.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետի.» բառերից առաջ լրացնել «Օրենքի» բառը	**Ընդունվել է**	**Ընդունվել է**